Դրամաշնորհի նկարագիրը

Երևան քաղաքի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները, Երևանի զբոսաշրջային երթուղիները, վայրերը, պուրակները տեղեկատվական ցուցանակներով կահավորելու նպատակով Երևանի քաղաքապետարանը հայտարարում է ցուցանակների էսքիզի պատրաստման դրամաշնորհային բաց մրցույթ:

Դրամաշնորհի հայտերը պետք է համապատասխանեն ստորև ներկայացված պայմաններին:

Հայտատուն պետք է ներկայացնի երկու նմուշի էսքիզ՝ ցուցանակ պատին փակցնելու համար և գետնին՝ հենակով տեղադրելու համար: Ցուցանակների չափսը՝ 25*30 սմ (լայնություն, երկարություն): Ցուցանակի հենակի միջին երկարությունը՝ 65սմ:

Ցուցանակը պետք է լինի ամուր նյութից, եղանակային տարբեր պայմաններին դիմակայող, չժանգոտվող, արևից չգունազրկվող, դիզայնը՝ ցանկալի է ինքնատիպ, սակայն գործնականորեն հեշտ պատրաստվող: Ցուցանակի պետք է լինի, այնպիսի նյութից, որ պատրաստումից հետո պահպանման երաշխիքը լինի ոչ պակաս, քան 7 տարի:

Ցուցանակի նյութը, ձևը, գույնը տեքստի տառատեսակը, չափսը պետք է առաջարկի հայտատուն: Ցուցանակի վրա տեքստը պետք է լինի հստակ ընթեռնելի: Ցուցանակը պետք է լուսավորված լինի: Ցուցանակի վրա պետք է տեղադրված լինի QR կոդ:

Մրցույթին կարող են դիմել իրավաբանական անձինք:

Դրամաշնորհի չափը կազմում է 300.000 դրամ:

Հայտերը պետք է ուղարկվեն tourism@yerevan.am էլեկտրոնային հասցեին մինչև 2023թ. հունիսի 20-ը ներառյալ: Վերջնաժամկետից ուշ ուղարկված հայտերը չեն դիտարկվի: Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 011514230 հեռախոսահամարով:

Հայտում պետք է ներկայացվեն էսքիզի տեքստային նկարագրությունը, պատկերը JPG ֆորմատով, ցուցանակի անիմացիան՝ MP4 ֆորմատով, ցուցանակի տեսքը հուշարձանի վրա (պայմանական օրինակով): Դրամաշնորհը շահելու դեպքում հայտատուն պետք է տրամադրի էսքիզի աշխատանքային ֆայլը:

Առաջարկի գնահատումը

Էսքիզի գնահատումը կիրականացվի Երևանի քաղաքապետարանի մշակույթի և տուրիզմի, արտաքին գովազդի, ճարտարապետության և քաղաքաշինության վարչությունների կողմից:

Հաղթող կճանաչվի այն առաջարկը, որը լիովին կհամապատասխանի ներկայացված պահանջներին, որում առաջարկված կլինեն նորարարական լուծումներ՝ էականորեն տարբերվող ստանդարտ մոտեցումից և որը գործնականորեն հնարավոր կլինի պատրաստել խելամիտ արժեքով: